ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/97

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Զաքարյանի (պետական գրանցման համար՝ 278.110.905066),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.05.2020թ. թիվ 26/26-1/6462-2020 գրությամբ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարության 29.04.2020թ. թիվ Ն/17-2/9339-2020 գրության հիման վրա, 05.05.2020թ. թիվ 26/26-1/6462-2020 գրությամբ նախաձեռնել է «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկներն և դիրքորոշումը.

«Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն 11.05.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ֆինանսների նախարարության կարիքների համար 08.04.2020թ. կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգին:

Ընկերությունը հայտնել է, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որը Ընկերությունը ձեռք է բերում շուկայից և համաձայն շուկայի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով տնտեսող լամպեր, որը չափաբաժնի անվանումից բացի հանդիսանում է նաև տվյալ լամպերի ֆիրմային անվանումը, LED ապրանքային նշանով, 3-րդ չափաբաժնի մասով ապրանքի ֆիրմային անվանումը չափաբաժնի անվանումից բացի հանդիսանում է նաև տվյալ մեկուսիչ ժապավենների ֆիրմային անվանումը VIN TAPE ապրանքային նշանով:

Ընկերությունը հայտնել է, որ վերոնշյալ ապրանքները ձեռք է բերում շուկայից և դրանց վրա «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ստացված տեղեկատվության համաձայն բացակայում են մակնիշները, այդ իսկ պատճառով Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում մակնիշը բացակայում է:

Ամփոփելով՝ Ընկերությունը հայտնել է նաև, որ գնման ընթացակարգը տեղի է ունեցել կորոնսավիրուսի համաճարակի կանխարգելման նպատակով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում և բազմաթիվ սահմանափակումների պարագայում Ընկերությունը մեկ օրյա ժամկետում չի կարողացել շտկել առկա անհամապատասխանությունը:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/97 ընթացակարգի շրջանակներում 14.05.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 29.04.2020թ. թիվ Ն/17-2/9339-2020 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կարիքների համար կազմակերպված ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցներից մեկի՝ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով որպես ֆիրմային անվանում ու ապրանքային նշան, 3-րդ չափաբաժնի մասով ֆիրմային անվանում լրացված են եղել չափաբաժինների անվանումները, իսկ մակնիշը ընդհանրապես նշված չի եղել:

Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն ծանուցվել է առկա անհամապատասխանությունների վերաբերյալ, սակայն վերջինս ամբողջությամբ չի շտկել այն՝ ներկայացրել է համապատասխան հավելվածը, որտեղ այս անգամ ևս չի նշել առաջարկվող ապրանքների մակնիշը, իսկ որպես ֆիրմային անվանում լրացված են եղել չափաբաժինների անվանումները:

Պատվիրատուն հայտնել է, նաև որ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 45-րդ կետի պահանջները՝ ներկայացնում է «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/93 ընթացակարգի շրջանակներում 14.05.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված՝ հավելված 1.1-ում կան անհամապատասխանություններ, մասնավորապես 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով որպես ֆիրմային անվանում ու ապրանքային նշան, իսկ 3-րդ չափաբաժնի մասով ֆիրմային անվանում լրացված են չափաբաժինների անվանումները, բոլոր չափաբաժինների մասով որպես արտադրողի անվանում նշված է ծագման երկիրը, իակ մակնիշը ընդհանրապես նշված չէ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2020թ. և 20.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները, ներկայացրել է հավելված 1.1-ը, որտեղ չի նշել առաջարկվող ապրանքների մակնիշը, որպես ֆիրմային անվանում լրացված են չափաբաժինների անվանումները, որպես արտադրողի անվանում նշված է ծագման երկիրը:

4. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

5. ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ լիազոր մարմնին ներկայացրել է 29.04.2020թ. թիվ Ն/17-2/9339-2020 գրությամբ:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.05.2020թ. թիվ 26/26-1/6462-2020 և 29.04.2020թ. թիվ Ն/17-2/9339-2020 գրությունները, «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի,

գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հայտարարվել է ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից ներկայացված՝ հավելված

1.1-ում կան անհամապատասխանություններ, մասնավորապես 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով որպես ֆիրմային անվանում ու ապրանքային նշան, իսկ 3-րդ չափաբաժնի մասով ֆիրմային անվանում լրացված են չափաբաժինների անվանումները, բոլոր չափաբաժինների մասով որպես արտադրողի անվանում նշված է ծագման երկիրը, իակ մակնիշը ընդհանրապես նշված չէ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.04.2020թ. և 20.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերությունը հրավերով սահմանված ժամկետում (1 աշխատանքային օր) չի շտկել հայտում առկա անհամապատասխանությունները, ներկայացրել է հավելված 1.1-ը, որտեղ չի նշել առաջարկվող ապրանքների մակնիշը, որպես ֆիրմային անվանում լրացված են չափաբաժինների անվանումները, որպես արտադրողի անվանում նշված է ծագման երկիրը:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար և մերժել:

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի դրույթով, Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով՝ ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 29.04.2020թ. թիվ Ն/17-2/9339-2020 գրությամբ:

Վերը նշված փաստերով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ ՖՆ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2020թ. նիստի թիվ 4 արձանագրությունը՝ Ընկերության հայտի մերժման վերաբերյալ, արձանագրում եմ, որ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 20.04.2020թ., սակայն Պատվիրատուն Ընկերության տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել է լիազորված մարմին 29.04.2020թ., որի պայմաններում Պատվիրատուի կողմից խախտվել է Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը (այդ թվում՝ մասնակցի տվյալները) լիազորված մարմին ներկայացնելու Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետը:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումը որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Ընդ որում՝ համապատասխան ժամկետային սահմանափակումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Այսպիսով՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

Այսպիսով՝ ժամկետային սահմանափակումները հետապնդում են իրավական որոշակիություն ապահովելու նպատակ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանը 02.04.2014թ. կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:»:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե՛ մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե՛ ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոգրյալ իրավանորմերի մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ տվյալ

դեպքում Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետով սահմանված իմպերատիվ դրույթը՝ այն է հինգ աշխատանքային օրյա ժամկետը: Ընդ որում՝ օրենսդրությունը չի նախատեսում նշված ժամկետը վերականգնելու ինստիտուտը, հետևաբար, տվյալ դեպքում հինգ աշխատանքային օրյա ժամկետի խախտման հանգամանքները չեն դիտարկվում:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.05.2020թ. թիվ 26/26-1/6462-2020 գրությամբ «Հիդրո Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**